№ 261 ՇԱԲԱԹ ՆՈՅԵՄԲԵՐԻ 27 — 1904 — ՇԱԲԱԹ ՆՈՅԵՄԲԵՐԻ 27 № 261

ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱԲԾԱՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը 6 բուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

Հայրապետ և Սիրանոյշ Ղամբարեանցները ցաւօք սրտի յայտնում են ազգականներին և ծանօթներին առաջինը իր հօր, երկրորդը սկեսրայրի

ՍԱՐԳԻՍ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ ՂԱՄԲԱՐԵԱՆՑԻ

մահը, որ տեղի ունեցաւ Նոյեմբերի 5-ին Պարսկաստանում, Ղարադաղի Սարդօ գիւղում։ Պատարագը և հոգեհանգիստը տեղի կունենան կիրակի, Նոյեմբերի 28-ին, Կուկիայի ս. Աստուածածին եկեղեցում (Վօրոնցօվի արձանի մօտ)։ Պատարագը սկսվելու է 10½ ժամին առաւօտեան, իսկ հոգեհանգիստը 12 ին։ 1—2

Կիրակի, Նոյեմբերի 28 ին

ԹԱՄԱՐԱ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ ՏԷՐ-ՍԱՐԳՍԵԱՆՑԻ

վաղաժամ մահվան տարեդարձի օրը, Թանդոյեան ս. Աստուածածին եկեղեցում, (Մրքայէլեան փողոց) տեղի կունենայ պատարագ, իսկ պատարագից յետոյ հոգեհանգիստ, որի մասին յայտնում են բարեկամներին և ծանօթներին հանգուցեալի ամուսին Իվան Սերգէեվիչ Տէր-Սարգսեանը և քրոջ որդին Ալէքսանդր Սերգէեվիչ Լիսինեանը։ Պատարագի սկիզբը 10½ ժամին, իսկ հոգեհանգստինը 12 ին։ 1—2

Կիրակի, Նոյեմբերի 28 ին կը կատարվի վաղամեռիկ

ԱՐՇԱԿ ԳՐԻԳՈՐԵԱՆ ԱԲՈՒԼԵԱՆՑԻ

մահվան տարեդարձի առիթով հոգեհանգիստ Չիգրաշէնի Աւետաց եկեղեցում, ուստի հանգուցեալի հայրը՝ Գրիգոր Մինասիչ Աբուլեանցը իր ընտանիքով, քոյրը՝ Վարվարէ Տէր-Յովհաննիսեանցը, եղբայրը՝ Աբգար Աբուլեանցը և հօրաքոյրը՝ Եղիսաբէթ Սուսանեանցը այդ մասին յայտնում են ծանօթներին և բարեկամներին։ Պատարագը կը սկսվի առաւօտեան ժամը 10½-ին, իսկ հոգեհանգիստը 12½ ժամին։ 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հետևողական պէտք է լինել.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Մի քանի առաջարկներ. Կորչում է. Նամակ Մերվից. Նամակ Ակբերմանից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը. Մի քայլ ևս առաջ. Արտաքին լուրեր..—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՀԵՏԵՒՈՂԱԿԱՆ ՊԷՏՔ Է ԼԻՆԵԼ

Մենք շատ հաւանում ենք, երբ տեսնում ենք ռուսական կամ արտասահմանեան մամուլի մէջ կեանքի քննադատութիւն, զեղծումների մերկացում, մնոտիապաշտութիւնների պախարակում։ Մամուլի այդպիսի վերաբերմունքը մենք գտնում ենք փրկարար և զարմանում ենք այն սահմանափակ ուղղղների վրա, որոնք աշխատում են արգելք հանդիսանալ մամուլի այդ գործունէութեանը։

Մենք բոլորս կուշտ ծիծաղել ենք չինացիների վրա և միևնոյն ժամանակ նրանց խղճացել ենք, տեսնելով թէ ինչպէս նրանք նախապաշարմունքներին աւելի գերադասութիւն են տուել, քան գիտութեանը, թէ ինչպէս ուժեղ կանոնաւոր եւրոպական զօրքի դէմ նրանք հանդէս են բերել կախարդական դրօշակներ վիշապների և չար ոգիների պատկերներով։

Սակայն մենք փոխում ենք մեր վերաբերմունքը դէպի այնպիսի երևոյթները, երբ նրանք կատարվում են մեր շրջապատող կեանքի մէջ, մեր երկրի սահմաններում։ Կեանքը քննադատելը լաւ է, բայց ոչ մեզանում. զեղծումները պէտք է մերկացնել, բայց ոչ մեր գործողների. մնոտիապաշտութիւնները պէտք է պախարակել և նրանց դէմ մաքառել, բայց ոչ մեր երկրում։ Մեզ համար ծաղրելի և զզուելի են օտար երկիրների խաւարամիտ անձնաւորութիւնները, բայց երբ բանը հասնում է մեր երկրի նոյնատեսակ գործողներին, մենք ոչ միայն ներողամիտ ենք, այլ յաճախ նոյն իսկ պաշտպան և հովանաւոր նրանց վերաբերութեամբ։ Մենք զայրանում ենք, երբ իմանում ենք, որ օտար երկիրների խաւարամիտ անձնաւորները քիչ-հանգիստ չեն թողնում իրանց հայեացքները հայրենասիրական զգացմունքի և մտածողութեան թանձր թաղանթով, իսկ երբ նոյն տեսակ ձայներ և հայեացքներ մեզ մօտ են լսվում, մենք պատրաստ ենք խոնարհվել նրանց առաջ։

Վերջին տասնեակ տարիներում, ճիշդ է, առաջադիմական միտքը մեզանում խոր ակոսներ է վարել հասարակական աշխարհայացքի մէջ և սկսել է մի գործ, որ կամաց-կամաց պէտք է մեզ հանէ դէպի լոյս աշխարհ և հաստատէ մեզանում լուսաւոր վերաբերմունք դէպի կեանքի երևոյթները։ Սակայն չը պէտք է թաղցնել և չարձանագրել և այս, որ մեր հասարակութեան մի քանի շրջաններում գործող մարդիկ բաւականաչափ ուժեղ չը հանդիսացան դիմանալու փորձութիւններին և կեանքի մի քանի երևոյթների ազդեցութեան տակ, սկսեցին թերահաւատութեամբ վերաբերվել եւրոպական կուլտուրայի սկզբունքներին մեր կեանքի մէջ։ Դա այն սխալներից մէկն է, որոնք կրկնվել են և մեզնից աւելի առաջադէմ երկիրներում, սակայն բաղդաւոր է եղել նա, ով կարողացել է շուտով ազատվել իր սխալից և նորից բոլոր եռանդով նուիրվել աշխարհաշէն գաղափարների իրագործութեանը կեանքի մէջ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

Ներկայ Նոյեմբերի 20-ին լրացաւ քառասուն տարի այն օրից, երբ Ալէքսանդր II կայսրը դատաստանական բէֆօրմ տուեց Ռուսաստանին։ Արդար սկզբունքների վրա հաստատված հրապարակական դատարանը, որ գոյութիւն էր ստանում 1864 թւի Նոյեմբերի 20-ին, մի շատ խոշոր, շատ լուսաւոր երեւոյթ էր Ռուսաստանի պետական և հասարակական կեանքի մէջ։ Ռուս նշանաւոր գրողները սարսափով են խօսում հին դատաստանի մասին։ Արդարադատութիւնը վաճառվում էր բացարձակ կերպով. դատաւորների կաշառակերութիւնը օրինականացած, հանրածանօթ իրականութիւն էր։ Նոյն իսկ արդարադատութեան մինիստրն էլ գիտէր, որ առանց կաշառքի դատաստան չը կայ և չէ կարող լինել Ռուսաստանի ոչ մի կողմում։ Յայտնի է պաշտօնական զեկուցմունքներից, որ արդարադատութեան մինիստր կոմս Պանին իր մի սեփական դատաստանական թեթև գործի համար 100 բուբլի կաշառք ուղարկեց Պետերբուրգի դատաստանական պաշտօնեաներին։ Այդ սարսափելի անարդարութեան վերջ դրեց Ալէքսանդր II ի դատաստանական բէֆորմը, որ նոր կարգեր հաստատեց, նոր գործիչներ հանեց ասպարէզ և արդարադատութեան սկզբունքին հաղորդեց հեղինակութիւն, ոյժ և կատարեալ հաւատ ազգաբնակութեան կողմից։ Ահա ինչ է ասում այդ քառասնամեակի առիթով «Рус. Вѣд.» լրագիրը.

Ալէքսանդր II-ի թագաւորութեան սկիզբը, որ արդարացի կերպով անուանվում է սեծ բէֆորմների դարաշրջան, մի ժամանակ է, որ ներկայացնում է հասարակութեան հոգեկան ոյժերի չափազանց բարձրանալու և արագ զարգանալու փայլուն պատկերը, հասարակութեան, որ առաջին անգամ կոչված էր միասին աշխատելու օրէնսդրական ստեղծագործութեան և թէ նոր օրէնքները կեանքի մէջ գործադրելու համար, որ մի կարճ միջոցում տուեց մեզ այն բոլոր հիմնարկութիւնները, այն լաւագոյն պետական հաստատութիւնները, որ մենք ունենք և թանդ ենք համարում մինչև այժմ։ Սեվաստոպոլի պատերազմի անաջողութիւնը բաց արաւ այն ժամանակ տիրող ամենակարող, ոչ մի հսկողութեան չենթարկված բիւրօկրատիական կառավարութեան պակասութիւնները և հասարակութեան բոլոր խաւերի ու վարչական շրջանների մէջ շօշափելի դարձաւ այն գիտակցութիւնը, թէ որքան անբաւարար են քաղաքական և վարչական բէֆորմը և սոցիալական կարգերը։

Այդ մեծ շարժման ժամանակ էլ կեանք ստացաւ դատաստանական բէֆորմը, որ այսօր արդէն քառասուն տարվայ կեանք ունի։ Բայց խաղաղ ու անվրդով չէր այդ կեանքը։ Խաւար, յետադէմ ոյժերը շատ էին աշխատում ոչնչացնել անկախ ու հրապարակական դատաստանը։ Ժամանակի ընթացքում բաւական փոփոխութիւններ մտցվեցին բէֆորմի մէջ, որ շատ մասերում կերպարանափոխվեց, հեռացաւ իր սկզբնական դիրքից։ Սակայն այսօր էլ դատաստանական բէֆորմը ընդհանրապէս պահպանում է իր նախկին հիմնական ոգին։ Ժամանակը մի կողմից բաւական բան խլեց նրանից, միւս կողմից ցոյց տուեց թէ ինչ պակասութիւններ են մնացել նրա մէջ սկզբից։ Այժմ, երբ դէպի հասարակութիւնն ունեցած վստահութեան մասին շատ է խօսվում, երբ ամենքը զգում են, որ «գարուն» է գալիս, ցանկալի է համարվում, որ դատաստանական բէֆորմը նորից ստանայ իր կորցրածները և ազատվի այն պակասութիւններից, որ ընդգծել է երկար տարիների փորձը։

Մենք, կովկասցիներս, դատաստանական մեծ բարենորոգման քառասնամեակին պիտի յիշենք մեր առանձնակի մի դրութիւնը, այն, որ դեռ 60-ական թւականներից վայելելով նոր դատարանների բարիքը, մենք մինչև այսօր զրկված ենք Ալէքսանդր II ի բէֆորմի մի ամենաէական հաստատութիւնից—երդուեալների դատարանից, որ ներկայացնում է հասարակական խիղճը։ Այդ մասին շատ են խօսել մեզանում։ Շատերն են ապացուցել, որ այլ ևս ոչինչ հիմք չը կայ անվստահութեամբ վերաբերվելու մեր երկրի ազգաբնակութեան, անչափահաս համարելու նրան մի այդպիսի պատուաւոր և պատասխանատու դերի համար։ Բայց մինչև այժմ էլ մենք զրկված ենք մեզում այդ կողմից։

ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

II

Մեր մամուլը չափազանց յաճախ է արձանագրել այն գանգատը, որ մեր բեմից չէ լսվում իսկական հայերէն լեզու։ Սա մի արդար բողոք է և արդար պահանջ։ Մեր հասարակութիւնը արդէն խորթ է իր մայրենի լեզուին, չը պէտք է նրան խրտնեցնել օտարաբանութիւններով, մթութիւններով և անիմաստ դարձուածքներով։ Չը մոռանանք թատրոնի կոչումը։ Ասացինք որ նա մի դպրոց է։ Ուրիշ ազգերում նա գաղափարների և զգացումների զարգացման ու ազնուացման մի դպրոց է, իսկ մեր մէջ մի բան էլ աւելի։ Վարչութիւնը ուրեմն պարտաւոր է ոչ միայն նոր թատերախաղերը լաւագոյն կերպով թարգմանել տալու, այլ և մի ընդհանուր քննութեան ենթարկելու ազգէն թարգմանված և բէպէրտուարի մաս կազմող պիէսները։ Այս մի և նոյն գործը կարելի է յանձնել բէպէրտուարական օժանդակ մասնախմբի խնամքին։ Վարչութիւնը դուցէ առարկէ, որ դրա համար ծախքեր են հարկաւոր, թէ մասնախմբի անդամները չեն համաձայնվի իրանց ժամանակը զոհել առանց վարձատրութեան։ Այդպէս էլ պէտք է, այո։ Բայց այդ ծախքը երբէք չը պէտք է ափսոսալ, որովհետև մեծ սխալ կը լինէր բեմ հանել այնպիսի թարգմանութիւններ, որոնք հայհոյում են բնագրին և հայ լեզուին։

Եւ յետոյ վարչութիւնը թատրոնը աւելի բեղմնաւոր, աւելի ժամանակի դարձնելու համար մեր հասարակութեան, պէտք է ջանայ կարելիութեան սահմաններում օգտվել այն միջոցներից, որ գործ են դրվում Եւրոպայում։ Օրինակ, այս կամ այն կարևոր և առանձին ուշադրութեան արժանի պիէսի ներկայացումից առաջ, թատրոնի տնօրէն-վարիչները դիմում են անում յայտնի, ձեռնհաս գրականագէտներին գալ մի դասախօսութեամբ (conférence) բացատրել հանդիսականներին պիէսի նշանակութիւնը, դերերը, գործող անձերի հոգեբանութիւնը։ Եւ այդ իսկ ուղղութեամբ մի ամբողջ գրականութիւն է ստեղծված աւարտող դարու վերջին քառեակի ընթացքում։ Ենթադրելով, որ այս միջոցը մեր մէջ, այս կամ այն պատճառով դժուար լինի իրագործել, ինչու չը պիտի որդեգրէինք մի ուրիշ օգտակար սովորութիւն, որը ընդունված է եւրոպական թատրոններում։ Այն է՝ պատմական, այլաբանական կամ նոր տեսակի պիէսների ներկայացվելիք բովանդակութիւնը, կը-մախքը կարևոր ծանօթութիւններով տալու հանդիսականներին։ Շատեր նկատած կը լինեն անշուշտ, որ մեր թատրոնը յաճախողների մեծ մասը, երբեմն, ոչ միայն չէ ըմբռնում պիէսի հիմնական միտքը, այլ և չէ կարողանում գիտակցօրէն հետևել գործողութիւններին։ Երբ խմացական ու գեղարուեստական զարգացումով անհամեմատ աւելի բարձր մի հասարակութեան համար անօգուտ չէ համարվում, բացի դասախօսութիւնների ընձեռած առաւելութիւնից, դիմել օժանդակ միջոցների, կարելի է համարձակ պնդել, որ մեր հասարակութեան մի և նոյն դիւրութիւնը ժառուցանել երբէք աւելորդ չէ։ Ինչպէս շեշտեցինք, վարչութիւնը, իր կազմակերպած ներկայացումները արդիւնաւոր դարձնելու համար չը պէտք է ընկրկի ոչ մի նկատողութեան առաջ։ Հակառակ դէպքում գործը կը դատապարտվի ամլութեան։ Իսկ ինչ վերաբերում է բովանդակութեան կազմելուն, վարչութիւնը՝ իւրաքանչիւր թատերախաղի հեղինակից կամ թարգմանչից թող խնդրէ այդ փոքրիկ աշխատանքը, որը վստահ ենք, սիրով պիտի կատարեն թարգմանիչներն ու հեղինակները, որովհետև դա մի նոր յոգնութիւն չէ նրանց համար։

Մենք պարտք համարեցինք վարչութեան ուշադրութիւնը հրաւիրել այս մի քանի ստիպողական պահանջների վրա։ Մեր ներկայացումների շարքը սկսվելու մօտ է. յոյս ունենք, որ այս տարի դրամատիքական վարչութիւնը կաշխատի աւելի հետաքրքիր, աւելի հրահանգիչ դարձնել մեր թատրոնը, որդեգրելով այնպիսի նորութիւններ, որոնք Եւրոպայում օգտակար հնութիւնների կարգն են անցել։

Տ. Զաւէն

ԿՈՐԶՈՒՄ Է

(Նաժակ Իգդիրից)

—

Յայտնի է, որ մեր գիւղացիները սաստիկ նեղվում են հողի պակասութիւնից. նոյն իսկ երկրագործութիւնը գիւղացու համար սկսել է կորցնել իր հրապոյրը այն պատճառով, որ հողերը անդամների մէջ շարունակ բաժանվելով՝ այնքան փոքրացել են, որ շահաւէտ չէ նրանց մշակելը։ Այսպիսի պարագաներում մեծ նշանակութիւն պէտք է ունենայ և հետաքրքրութեան առարկայ լինի, երբ հնար ունի գիւղացին մի կտոր հող ձեռք բերել։

Գուցէ և ընթերցողները կարդացած լինեն յունվար և փետրվար ամիսներում «Մշակի» մէջ մի յայտարարութիւն, որ «Սուրմալուի գաւառում ծախվում է 2271 դեսեատին հող». մեզ ծանօթ է այդ կալուածքը, որ շատ յարմար է զանազան հացաբոյսեր մշակելու և առանձնապահութեամբ պարապելու համար և մի քանի բարենպաստութիւններով կարող է տարեկան 3—10 հազար բուբլի եկամուտ տալ։ Այդ կալուածքը այժմ այնպիսի պայմաններով է շղթայված, որ կարելի է գնել 20—25 հազար բուբլով։

Բայց ինչ. ոչ մի հետաքրքրվող չեղաւ, ոչ մի դրամատէր չը մտածեց օգտվել այդ մեծ ապագայ ունեցող կալուածքից. իսկ գիւղացիների մտքովը չէ անցնում երբէք, որ եթէ ուզենան, կարող են համերաշխութեամբ, ընկերական միջոցներով փող ձեռք բերել և գնել այդ կալուածքը և իրանց համար հաստատուն ապագայ ստեղծել։ Վերցնենք նրա մօտիկ սահմանակից Խալֆալու գիւղացիներին, որոնք թէպէտ համեմատած միւս գիւղացիների հետ բարեկեցիկ վիճակ ունեն, բայց շատ կարիք ունեն հողի և շատ ձեռնտու և անհրաժեշտ է, որ նրանք ամբողջ գիւղով միանան, բանակցութիւն վարեն մի որ և է դրամատան հետ և փող ձեռք բերելով առնեն այդ կալուածքը և կցեն իրանց գիւղի հետ։

Ցիշեալ գիւղում կը գտնվեն մարդիկ, որ կարող են միանուագ մէկից մինչև տաս հազար բուբլի մէջ բերել։ Իգդիրի շատ վաճառականներ իրանց առևտուրը ապառիկ են անում և փոխարէնը անասուն են ժողո- [illegible] գործը հաստատ հիմքի վրա դնելու, բայց և այնպէս այդպիսի խնդիրների վրա մտածելը յանցանք են համարում։

Եւ անցեալ գարնան առիթ ունեցայ լինել գերմանական գաղթավայր Եկատերինենֆելդտ գիւղում, որի մասին խօսելը թողնելով ուրիշ անգամի, աւելորդ չեմ համարում ասել, որ նրա մօտ մի կալուածատէր ծախելիս է լինում իր կալուածքը, և ահա յիշեալ եկատերինենֆելդցիները միանալով իսկոյն թէ իրանց հասարակական դրամարկղից և թէ ուրիշ բանկերից պարտք վերցնելով առնում են յիշեալ կալուածքը մօտ քառասուն հազար լուբլով և ընդարձակում են իրանց գիւղի սահմանները. ահա մի ժողովուրդ, որ իրաւունք ունի ապրելու։ Միթէ մենք ընդօրինակելու շնորհից էլ զուրկ ենք։ Կորչում է, եթէ չը շտապեն մեր հողազուրկ գիւղացիները այսպիսի պարագաներից օգտվել.

Եթէ Իգդիրում լի էր մի գիւղական բանկ, այդպիսի ձեռնարկութիւնները շատ դիւրին կը կատարվէին։

Ց. Խոջաէյնաթեան

ՆԱՄԱԿ ՄԵՐՎԻՑ

—

Նոյեմբերի 17 ին

Ամսիս 24-ին քաղաքային ժողովարանի դահլիճում տեղիս սիրողները, բարեգործական նպատակով, տուին իրանց երրորդ ներկայացումը։ «Եաղ Աստ» հեղինակութիւն պ. Ղազարեանի և «Մօղա» հեղինակութիւն պ. Էմին Տէր-Գրիգորեանի։ Չը Նայած անձրևային եղանակին, դահլիճը համարեա թէ լիքն էր երկսեռ բազմութեամբ։ Թէ սիրողները և թէ սիրողուհիները իրանց դերերը բարեխղճօրէն կատարեցին, որով և արժանացան հասարակութեան կողմից քանիցս բուռն ծափահարութիւնների։ Ներկայացումից յետոյ տեղի ունեցան ասիական պարեր, որ տևեց մինչև գիշերվայ ժամի 2 ը, որից յետոյ հասարակութիւնը գոհ սրտով և ուրախ տրամադրութեան տակ հեռացաւ։

Խորին շնորհակալութեան արժանի են յարգելի տիկին Մէլիք-Ասլանեան և Մէլիք-Մկրտչեան, որոնք ուշադրութիւն չը դարձնելով տեղական մի քանի բամբասաէր կանանց «ասէ-կոսէներ»-ին, երրորդ անգամ բեմ բարձրացան, որով նպաստեցին ու խրախուսեցին սիրողներին իրանց ձեռնարկած բարի գործի շարունակութիւնը չընդհատելով։ Յարգելի տիկինները իրանց շնորհալի խաղով արժանացան հասարակութեան կողմից բուռն ծափահարութիւնների քանիցս բեմ հրաւիրելով և ստացան երկու մեծ փունջեր հազուագիւտ ծաղիկներից կազմված։

Մուտք եղաւ մօտ 175 բուբլի, որից ծախքերը դուրս գալով մօտ 70 ր., զուտ արդիւնքը փոխացել մօտաւորապէս 105 բուբլի։

Ինչպէս լսում ենք, նոյն սիրողները պատրաստվում են դարձեալ մօտիկ ապագայում մի ներկայացում տալու. ցանկանում ենք կատարեալ աջողութիւն։

Ի դէպ, չենք կարող մեր զոհունակութիւնը չը յայտնել մեր երիտասարդ քահանայ Պապովեանին, որը, ուշադրութիւն չը դարձնելով փողոցներում սիրող անտանելի ցեխին և վերևից մաղվող անձրևին, սիրալիր կերպով սիրողների հետ մասնակցում էր տոմսակները տարածելուն։ Մենք հարց, չէ որ դեռ սովոր չենք ինքնակամ յաճախել թատրոն, մինչև որ մի քանի անգամ մեզ չը խնդրեն... ուրեմն պարզ է, թէ Տէր-հօր աջակցութիւնը որքան բարերար ազդեցութիւն էր անում սիրողների ձեռնարկած բարի գործին...

Հաժակրող

ՆԱՄԱԿ ԱԿՔԵՐՄԱՆԻՑ

—

Նոյեմբերի 3-ին

Ակքերմանում հայ բնակիչների թիւը որոշվում է 100—150 տուն, որոնք հայախօս չեն։ Ունեն մի հին գեղանափոր եկեղեցի և կողքին ծխական միդասեան դպրոց։ Դպրոցը այնպիսի մի ողորմելի դրութեան մէջ է գտնվում, որ ակամայից մարդ յիշում է Տէր-Թոդիկին։ Բայց ընթերցողը չը կարծէ, որ այստեղ «ֆալախկան» է տիրում։

—Ոչ։

Ընդհակառակը, ուսուցչական կազմը բաղկացած է հաժակրելի և լուսամիտ անձերից—մի ճեմարանաւարտ երիտասարդ ուսուցչից, գիմնազիաւարտ ուսուցչուհուց, որոնք իրրև նոր ժամանակի մարդիկ հաժապատասխանում են ժամանակակից կրթութեան ամենագլխաւոր պահանջներին։ Օրինակ՝ մեր դպրոցում ծեծ և ուրիշ սրա նման միջոցներ չը կան, որոնք աշակերտի մէջ ծնեցնում են միայն ատելութիւն դէպի կրթութիւնը։ Ուսուցչական կազմը լրացնում է տեղական կրօնուսոյց քահանան և ձեռագործութիւն դասաւանդող ծերունի վարժուհին։ Դպրոցը ունի չորս հոգաբարձու, ընտրված ժողովրդից։ Նրանցից մինը մի և նոյն ժամանակ և գանձապահ է և երեցփոխ, որի վրա և շալակում են միւսները իրանց պաշտօնի բեռը։ Մեր հոգաբարձուները այնքան լաւ են ըմբռնել իրանց դերը, որ բաւականանում են միայն նրանով, որ ամբողջ տարին ձեռները ծալած կրում են «հոգաբարձու» անունը։ Եւ ուսուցչական կազմն է իր սանիկներով հանդերձ տուժողը հոգաբարձուների այդ անտարբերութիւնից, ամիսներով ռոճիկ չը ստանալով և ցուրտ տեղ կրթութեամբ պարապելով։

Այս ամառ, երբ մեր նախկին ուսուցիչ պ. Ամատունին հեռանալու էր մեզանից, ձեռնարկեց մի ժողովարարութեան յօգուտ դպրոցի, ի միջի այլոց և այն պատճառով, որ ինքը և ուսուցչուհին չէին ստացել իրանց երկու ամսվայ ռոճիկը։ Այժմ, երբ մեր ուսուցչական կազմը մօտ երկու ամիս սպասում է իր ռոճիկին, ուսուցչին առաջարկում են տնէտուն ման գալ և ողորմութեամբ փող ժողովել, (պատճառաբանելով պ. Ամատունու արածը), իսկ երբ նա մերժում է, նրան դատապարտում են։

Դատապարտելի է այստեղ ուսուցչի մերժումը, թէ հոգաբարձութեան անգործութիւնը—թողնում եմ դատել ընթերցողին։

Բայց այդ դեռ բաւական չէ։

Մեր յարգելի հոգաբարձուներից մինը պ. Ամատունու ժողովարարութեան ժամանակ լաւ է հաժարել հրաժարվել ոչ միայն հոգաբարձութիւնից, այլ և Լուսաւորչական եկեղեցուց ասելով՝—ես ոչ հոգաբարձու եմ ցանկանում լինել, ոչ էլ հայ-լուսաւորչական, ես բողոքական եմ, իսկ մի ուրիշը պատրաստականութիւն է յայտնել, թէկուզ նոյն ըսպէին հրաժարվել պաշտօնից։

—Պատճառը։

—Մի բուբլին։

Ակամայից մարդ յիշում է անմահ Դամառ-Քաթիպայի ասածը.

«Ա՜խ, Ի՜նչպէս կուզեմ, որ մեր հայերուս
Արծաթածուէր սէրը ուժան, գիտութեան,
Հայի մէջ չի մնար մի հատիկ անուս...
Լոկ հեռի ինձնից թուղթ ստորագրութեան։»

Ինձ շատ է հետաքրքրում մի հարց. թէ ինչու են ընտրվել հոգաբարձու այնպիսի մարդիկ, որոնցից մազաչափ օգուտ չի ստանալու մեր թշուառ դպրոցը։

—Ինչու էք յանձն առել այդ պաշտօնը, պարոնայք, եթէ զգում էիք որ ընդունակ չէք վարելու։ Ինչացու էք դուք, եթէ ձեզ ոչ մի բան չի կապում ոչ միայն հայկական կրթութեան, այլ և հայկական եկեղեցու և ազգի հետ։ Դատապարտելի է ձեր այդ հանելուկով քողարկված անարդար վարմունքը դէպի կրթութեան գործը։

Լևոն Մարմանդ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ներքին գործերի մինիստրութեան մէջ արդէն ստացվել են բաւական մեծ թիվով խնդիրներ Ռուսաստանի քաղաքագլուխների ընդհանուր ժողով հրաւիրելու մասին։ «Русь»-ի ասելով, այդ ժողովի հարցը որոշ ձևով չի վճռվի, մինչև որ հարցը մանրամասնաբար չը պարզվի։ Մտադրութիւն կայ առաջարկելու բոլոր քաղաքներին, որ առանձին-առանձին, իրանք-իրանց ձայնաւորներից ընդհանուր ժողովներ անեն և որոշեն, թէ ինչ փոփոխութիւններ ցանկալի են քաղաքային ինքնավարութեան ներկայ օրէնսդրութեան մէջ։ Այդ ճանապարհով հաւաքված նիւթերը, մինիստրութեան կարծիքով, կարող են մեծ արժէք ունենալ քաղաքագլուխների ապագայ ընդհանուր համառուսական ժողովի համար։

—

Լուսաւորութեան մինիստրութիւնը ներկայումս քննում է մի շարք խնդիրներ, որ ներկայացրել են 1901, 1092 և 1902 թուերին բարձրագոյն դպրոցներից զանազան պատճառներով արտաքսված կամ հեռացված երիտասարդները. նրանք խնդրում են թոյլտուութիւն նորից վերադառնալու այդ դպրոցները և իրանց ուսումը վերջացնելու։ Այդ խնդիրներից մի քանիսն արդէն բաւարարութիւն են ստացել։

—

Բանդերի գլխաւոր վարչութիւնը, ներկայ պատերազմի պատճառով, դադարեցրել է տաժանակիրներն աշխատանքների դատապարտվածների իր սովորական առաքումները գարնանը և աշնանը, Օդեսայից, կամաւոր նաւատորմի նաւերով դէպի Սախալին։ Ներկայումս տաժանակիրը աշխատանքների դատապարտվածների մեծ մասը պահվում է նահանգական բանտերում, մի փոքր ժամ էլ ուղարկվում է Ներչինսկի բանտը, իսկ Ճացածները Ճում են առ այժմ ժամանակաւոր (пересыльная) բանտերում։ Առաջիկայ գարնանը, ասում է «Русь»-ը, բանտային վարչութիւնն ուզում է տաժանակիրներին ուղարկել Սիբիրի գծով դէպի Ամուր, այնտեղ խճուղի շինելու համար։ Իսկ Իրկուտսկի մօտի Ալէքսանդրեան տաժանակիրների բանդը պէտք է վերածվի հիւանդանոցի վերաւոր զինուորներ դետեղելու համար։

—

Մօտ ժամանակներս Մոսկվայում լոյս է տեսնելու մի նոր մանկական ամսագիր «Семья и Школа» անունով։ Նա նշանակված է լինելու 10—12 տարեկան երեխաների ընթերցասութեան համար։ Խմբագիր-հրատարակիչն է Վ. Ն. Լվովը, որ հրատարակում էր «Школьная Библіотека» մանկական գրքոյկների շարքը։ Տարեկան բաժանորդագրիչը լինելու է 2 ր. 50 կ.։

—

Գոլտավայի դումայի ձայնաւոր Մ. Ի. Սօսնովսկին քաղաքագլուխ Տրեգուբովին յայտագիր է տուել, որով առաջարկում է դումային Դատաստանական Կանոնադրութիւնների 40-ամեակի առիթով, 1) միջնորդել որ 1864 թուի կանոնադրութիւնները լիովին վերականգնվեն, ոչնչացնելով այս 40 տարվայ մէջ արված բոլոր սահմանափակումները, 2) քաղաքային դպրոցներում մտցվի օրէնսգիտութեան ուսուցումը և, 3) Կանոնադրութիւնների յոբելեանի օրը տեղական նահանգական դատարանին շնորհաւորութիւններ անել։

—

Սարատովից գրում են «Р. В.»-ին, որ Ա. Ս. Վասիլեվա անունով վարժուհին, որ մի քանի ժամանակ առաջ հեռացված էր մանկավարժական գործունէութիւնից, ներկայումս, ներքին գործերի մինիստրի կարգադրութեամբ՝ նորից թոյլտուութիւն է ստացել վերսկսելու իր ուսուցչական գործունէութիւնը։

—

ԲՕՐՋԱԼՈՒԻ Եկատերինֆելդից մեզ գրում են. «Մեզանից մօտ թուրքաբնակ Արխլու գիւղում երևացել է կասկածելի խօլերայի դէպքով հիւանդութիւն, որով առաջինը հիւանդացան քսան տարեկան մի երիտասարդ և իր մայրը, որոնք հետևեալ օրը վախճանվեցին։ Նրանից յետոյ պատահել են մի քանի դէպքեր. սարսափելին այն է, որ բացի գիւղական կեղտոտութիւններից ռամիկ ժողովուրդը վախենալով, որ լուրը չը հասնի գաւառապետին, ամեն կերպով թաքցնում է, կարծելով, թէ բժիշկը կը գայ, ինչպէս անասունների ժանտախտի ժամանակ իրանց էլ կը կոտորէ։

—

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են. «Նորերս թողեց իր պաշտօնը Ղազախի գաւառապետի աւագ օգնական Մարկոս-բէկ Տէր-Աստուածատրեանցը, որը ծառայել է պրիստաւի պաշտօնով նաև Գանձակի գաւառի զանազան շրջաններում։ Պ. Տէր-Աստուածատրեանը իր պատասխանատու պաշտօնները տարել է միշտ աչքի ընկնող բարեխղճութեամբ ու մեծ եռանդով. յայտնի է եղել միշտ իբրև ժողովրդասէր, գիւղական ժողովրդի բարեկամ պաշտօնեայ։ Թէ Գանձակի և թէ Ղազախի հայ ու թուրք գիւղական ժողովրդի խաւերում լաւ անուն է վայելել Մարկոս-բէկ Տէր-Աստուածատրեանը. յիշեալ գաւառների ժողովուրդը անչափ ցաւում է այժմ, որ նա թողել է իր պաշտօնը։ Տէր-Աստուածատրեանի ժողովրդականութիւնը բացատրվում է նրանով, որ նա, անթիւ անգամ ենթարկելով իր կեանքը վտանգի, վերջին տարիներս, սկսած 1897 թ., ոչնչացրեց բազմաթիւ աւազակախմբեր Գանձակի ու Ղազախի գաւառներում»։

—

ԱԽԱԼՑԽԱՅԻՑ մեզ գրում են. «Կիրակի նոյեմբերի 14-ին քաղաքի օրիորդաց տարրական ուսումնարանի դահլիճում, յօգուտ նոյն ուսումնարանի, տեղական թատերասէրների խումբը տուեց մի ներկայացում։ Խաղացին Մուրացանի «Ռուզան» պատմական դրաման, 5 գործ. 9 պատկեր, գեները սովորականից քիչ էժանացրած լինելով, դահլիճը ասեղ ձգելու տեղ չը կար և ամբողջապէս բռնված էր երկսեռ հանդիսականներով։ Խաղն ընդհանրապէս անցաւ լաւ և գոհացուցիչ։ Դերակատարներից մեծամասնութիւնը բաւական ըմբռնել էին իրանց դերերը և արժանացան ժողովրդեան բուռն ծափահարութիւններին։ Մուտք եղաւ, ինչպէս լսեցինք 100 բուբլուց աւելի։ Ինչպէս տեղեկանում ենք, մեր սիրողները մտադիր են այս տարի մի շարք ներկայացումներ տալ։ Մօտ օրերս նրանք տալու են մի ներկայացում կլուբում անդամների և նրանց ընտանիքների համար, իսկ մի ներկայացում էլ էժանացրած գներով նոյն ուսումնարանում յօգուտ տեղական բանտարկեալների։ Գովելի գործունէութիւն. ցանկանում ենք աջողութիւն»։

—

ՏՈՂ գիւղից մեզ գրում են. «Տողեցի Հաժբարձում Աթայեանցը, մօտ 75 տարեկան մի ծերունի, անցեալ հոկտեմբեր ամսին գնում է իր այգին, որտեղ խեղճ մարդուն գնդակահար են անում։ Գործին տեղեկանալուց յետոյ, քննիչը բանտարկում է նրա հարազատ որդուն, Մարդի Աթայեանցին, որին պ. քննիչը երաշխաւորութեամբ էլ չէ արձակում բանտից։ Կարծեմ աւելորդ չի լինի ընթերցողներին համառօտ կերպով ծանօթացնելու սպանված ծերունու հետ։ Զորս տարի սրանից առաջ Հաժբարձում Աթայեանցի կինը մեռնում է. սա ցանկութիւն է յայտնում պսակվելու, բայց որդիքը չեն հաժաձայնվում, ուստի ծերունին բաժանվում է որդկերանցից ու պսակվում. սակայն մի քանի ամսից յետոյ միանում է նրա և երկրորդ կինը։ Ծերունին դարձեալ ցանկութիւն է յայտնում պսակվելու, բայց այս անգամ որդիքը բացարձակ ընդդիմանում են։ Այնուհետև հօր և որդկերանց մէջ վէճերը և կռիւները, անպակաս են լինում։ Աթայեանցը մի քանի անգամ գանգատվում է տանուտէրին իր որդկերանց վրա, թէ նրան ուզում են սպանել։ Վերջապէս ծերունին պսակվում է երրորդ անգամ։ Երրորդ կնոջից լինում է մի արու զաւակ։ Սեպտեմբեր ամսին Հ. Աթայեանցը, կնոջ, մանկան, իր աղջկերանց հետ, գնում են այգեկութի։ Այգում մանուկը կէս օրվայ դէմ սկսում է որձիւնք թափել, իսկ երեկոյեան դէմ մեռնում է. մի ամսից յետոյ նոյն այգում սպանվում է նաև ծերունին։ Այս հանգամանքը պատմվում է ժողովրդի մէջ մեծ զայրութով և բոլորն էլ այն կարծիքին են, որ ծերունու որդիքն են իրանց հօր սպանել տուել, որպէս զի նրանց հայրական կալուածքները մնան իրանց»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

—

Ապագայ գործը Մանջուրիայում։ «Рус. Вѣд.» լրագրի պատերազմական քննադատը հետևեալ կերպով է գծագրում Մանջուրիայի գործը մօտիկ ապագայում։ Եապօնիայի համար ձմեռային արշաւանք վարելը մեծ դժուարութիւններ պէտք է ունենայ։ Ի նկատի ունենալով, որ Ինկօուի և Շախէն նաւահանգիստները—մարշալ Օյեամայի զօրքերի ցամաքային հաղորդակցական գծի վերջնական նաւահանգիստները—շուտով պէտք է սառչեն, եապօնացիները պէտք է իրանց ցամաքային զօրքերի յենակէտը փոխադրեն հարաւ, Դեղին և Եապօնական ծովերի չը սառչող նաւահանգիստները։ Օկուի և Նոդզուի բանակները փոխանակ Ինկօուի, պէտք է յենակէտ որոնեն Դալնիում, որ կազմում է այժմ Պօրտ-Արտուրը պաշարող զօրքի յենակէտը, իսկ Կուրօկիի բանակը, փոխանակ Շախէի, պէտք է յենվի Զէմուլպօի վրա, որ նրա առաջվայ յենակէտն էր Եալու գետի կուից առաջ։ Այդ երկու կէտերը, որոնք այժմ առաջնակարգ կարևորութիւն են ստանում մարշալ Օյեամայի ցամաքային գործողութիւնների համար, կապված են արդէն Լեաօեանի հետ երկաթուղու գծով։ Մանջուրական երկաթուղու գիծը Դալնիից մինչև Դաշիցաօ դեռ սեպտեմբերի վերջին և հոկտեմբերի սկզբին եապօնացիները վերածեցին նեղ գծի։ Նոյեմբերի սկզբին, անգլիական լրագիրների ասելով, սկսվեց շարժումն նոր շինված երկաթուղու գծի՝ Սէուլ-Իչժուի և Շախէձի—Ֆինխուանչէն գծի վրայով։ Այդպիսով և ձմեռը եապօնական զօրքերը Տայցզիխէ գետի վրա ապահոված կը լինեն երկու երկաթուղային գծերով թիկունքից, բայց այնու ամենայնիւ մարշալ Օյեամայի ցամաքային հաղորդակցական գծերի տարածութիւնը Եալու և Լեաօխէ գետաբերանների սառչելովը երկպատիկ կը մեծանայ։

Gerard հսկադրայի կազմութիւն։ Ինչպէս հաղորդում է «Н. В.» լրագիրը, սենսացիա է առաջացնում այն լուրը, թէ առաջիկայում կազմվում է երրորդ խաղաղ-ովկիանեան էսկադրա, ուստի միջնորդութեան մասին յստակապէս խօսողները ընկճվել են հոգով։

Կռիւ 203 մետրանոց խութի համար։ Զինական աղբիւրներից հաղորդում են Բերլին, որ Պօրտ-Արտուրում նորից կատաղի կռիւ է մղվում «203 մէտրանոց խութի կամ բլրագագաթի» տիրապետութեան համար, որը բերդի պաշտպանները մոռացել են յետ խլել։ Պաշարողների մէջ, չինացիների պատմելով, սպանվածների և վիրաւորների թիւը հսկայական է։ (Р. Д.)

Ծովապետ Ուրիուի արշաւումը։ Ինչպէս յայտնի է հեռագիրներից, Մասէբօից դուրս է եկել փոխ-ծովապետ Ուրիուն մի նաւախմբով, բաղկացած երեք մեծ կրէյսէրներից և 15 հակ-ական նաւերից։ Այդ լուրի առիթով. «N. F. P.» լրագիրը նկատում է. «Ուրիուի արշաւման պատրաստութիւնները կատարվում էին ամենամեծ գաղտնապահութեամբ, բայց վերջ ի վերջոյ ծածկել այդպիսի նշանաւոր էսկադրայի դուրս գալը անկարելի էր, թէև նաւերը թողնում էին նաւահանգիստը մի առ մի և առանձին խմբերով։ Ծովային շրջաններում ենթադրում են, որ Ուրիուն նպատակ ունի որոգայթ լարել բալտիական էսկադրային Մաայեան արքիպելագոսում, որ շատ ընտիր կէտերը է ներկայացնում այդպիսի ձեռնարկութիւնների համար։ (Н. Д.)

ՄԻ ՔԱՅԼ ԵՒՍ ԱՌԱՋ

(Նամակ Թաւրիզից, նոյեմբերի 15-ին)

—

Դարերից ի վեր տգիտութեան ծոցում խարխափող պարսկահայը վերջին ժամանակներս ջանք է գործ դնում մի կողմ քշել իրանից խաւարի թանձր քօղը և աշխատում է քայլ առ քայլ մօտենալ աւելի լուսաւոր երկիրներում ապրող իր եղբայրներին։ Մենք այսօր սրտի ուրախութեամբ ողջունում ենք Թաւրիզեցիների մի խայլ եւս առաջ շարժվելը...

Ղալա-Թաղի ծխականների նոյեմբերի 14-ի կայացած ընդհանուր ժողովում երկար ու բարակ վիճաբանութիւններից յետոյ հետևեալ որոշումները կայացաւ առաջիկայ 1905 թուի յունվարի 1-ից գործադրութեան մէջ մտցնելու պայմանով։

Ա. վերացնել միանգամ ընդմիշտ եկեղեցում գանձանակ պտտեցնելը։ Բ. արգելել քահանաներին և այլ հոգևոր պաշտօնեաներին զանազան ծիսակատարութիւնների համար ժողովրդից դրամ ստանալը։ Գ. Զը պէտք է գործ դրվի այսուհետև «Պըտղի» կոչված տուրքի հաւաքումը։ Մի խօսքով եկեղեցու բոլոր պաշտօնեաները, բոլոր ծիսակատարութիւնները պէտք է կատարեն առանց դրամական որ և է վարձատրութեան։ Դ. Ժողովրդից պէտք է հաւաքել որոշ տարեկան տուրք միանուագ, կամ մաս-մաս, բաժանելով ծխականներին դասակարգերի։ Եւ այդ միջոցով հոգալ հոգևոր պաշտօնեաների ռոճիկները և զանազան գանձանակներին փոխարինող հասոյթները հետևեալ կերպով. քահանաներին ռոճիկ տարեկան 300-ական թուման, առաջնորդարանին «Պըտղի» տուրքի փոխարէն 100 թուման., լուսաբարին 80—120 թուման., եկեղեցուն 60 թուման., ժամկոչին 120 թուման., ս. Էջմիածնին 40 թուման, դպրաց դասին 20 թուման։

Այդ ժողովից դուրս կազմված թեմական խորհուրդն էլ իր որոշումների մէջ մտցրել է և առաջնորդի կամ տեղապահի ռոճիկը։ Ուրախալի է այն, որ մեր հոգևոր պաշտօնեաները ազատվելով մուրացկանին յատուկ և անվայել դերից, ժամանակ կունենան մի քիչ էլ դուրս նայել իրանց դրամական նեղ հաշիւներից ու դիտել իրանց շուրջը, իրանց բարոյական և մեծ պարտականութիւնների մասին խորհել... Ուրախալի է նաև, որ ժողովուրդն էլ ազատուեց ամեն անգամ եկեղեցի գընալուց առաջ դրպանները նայելու սովորութիւնից, թէ արդեօք մի քանի կոպէկ ունի, որ ազատվի ժամկոչից և տիրացուներից... Նոյեմբերի 14-ի ժողովում Ղալա-Թաղի ս. Աստուածածին եկեղեցու համար քահանայ ընտրեցին Տ. Գարեգին Արծրունուն։ Ցանկանում ենք յարատևութիւն թէ ընդհանուր ժողովի որոշումներին և թէ թեմական խորհրդի որոշումներին։

Մ. Սահակեանց

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Գերմանիա և Անգլիա։ Վերջերս յայտնի սառնութիւն է սկսել տիրել Գերմանիայի և Անգլիայի յարաբերութիւնների մէջ։ Անգլիական լրագիրներից երկուսը «Դայլի Գրաֆիկ» և «Դայլի Քրոնիկլ», չը հերքելով այն փաստը, որ Գերմանիայի և Անգլիայի մէջ առաջ է եկել սաստիկ սառնութիւն, ասում են, թէ պէտք է միայն ցաւել դրա համար։ Անգլիական քաղաքականութիւնը, ասում են այդ լրագիրները, ձգտում է բարեկամական յարաբերութիւններ հաստատել բոլոր պետութիւնների հետ և մանաւանդ Գերմանիայի հետ. լրագիրը յոյս է տածում, որ նախկին անգլո-գերմանական բարեկամութիւնը շուտով կը հաստատվի։

Գերմանական կանցլեր կոմս Բիւլովը նոյեմբերի 15-ին մի խօսակցութիւն ունեցաւ Բալֆուրի հետ անգլո-գերմանական յարաբերութիւնների սառնութեան մասին։ «Ձեր մամուլի մէջ, ասաց կոմսը, նկատվում է սաստիկ թշնամութիւն դէպի Գերմանիան, որի մասին ես անկեղծօրէն ափսոսում եմ։ Ինձ թւում է, որ ձեր հրապարակախօսներից շատերը իրանց գործունէութեան գլխաւոր առարկայ են շինել լրագրական պայքարը։ «Times» լրագրի Պէկինի թղթակիցը մեղադրանք է բարդել Չինաստանի մեր դեսպանի վրա տիբէտեան հարցի առիթով։ Կարող եմ հաւատացնել ձեզ, որ Տիբետին մենք նոյնքան անտարբեր ենք վերաբերվում, ինչքան և Մանջուրիային։ Մենք սահմանափակվում ենք միայն Չինաստանի անկախութեան և չեզոքութեան պահպանութեամբ, մի կողմ թողնելով նրա հովանաւորութեան ներքոյ գտնվող նահանգները և շրջանները»։

Կոմս Բիւլովի այս յայտարարութիւնը թէև հանգստացուցիչ տպաւորութիւն թողեց, բայց գերմանական մամուլը չաջակցեց նրան։ Ընդհակառակը, գերմանական մամուլի արտայայտած կարծիքը ռուս-անգլիական դեկլարացիայի մասին աւելի ևս կարող են սաստկացնել հակա գերմանական տրամադրութիւնը Անգլիայում։ «Times» լրագրի Բերլինի թղթակիցը հաւաքել է այդպիսի կարծիքների մի ամբողջ փունջ, որոնց նպատակն է մեղադրել Անգլիային և Ֆրանսիային՝ փորձերի մէջ ստեղծել Ռուսաստանի հետ նոր երեքպետեան դաշնակցութիւն Գերմանիայի դէմ։ Գերմանական լրագիրները մի և նոյն ժամանակ աշխատում են ապացուցանել, թէ խօսք չէ կարող լինել լուրջ համաձայնութեան մասին Անգլիայի և Ռուսաստանի միջև, որովհետև իբր թէ նրանց շահերը անհաշտելի են։

Պարսկաստան։ Նորերս, ինչպէս յայտնի է, Պարսից Շահը Պետերբուրգ ուղարկեց Միրզա Ռիզա խանին արտակարգ դեսպանութեամբ։ Ամերիկական «N. I. Herald» լրագիրը յայտնում է, որ Շահը, անհանգստանալով այն բանից, որ Հնդկաստանի փոխարքան յաճախ «առևտրական» միսսիաներ է ուղարկում Պարսկաստան, որոշեց ուղարկել Պետերբուրգ առանձին դեսպանութիւն։

Թէհրանից հաղորդում են, որ սադրազամ Էյն-Դօվլէ շահզադէն ներկայացրեց Շահին պետական մուրքի և ծախսի նախահաշիւը առաջիկայ տարվայ համար։ Դա առաջին աշող փորձն է Պարսկաստանում կարգի դնելու երկրի ֆինանսական տնտեսութիւնը։ Նախահաշիւը կազմված է առանց դեֆիցիտի։ Այդպիսի նպաստաւոր արդիւնք սադրազամը ձեռք է բերել շնորհիւ այն բանի, որ կրճատել է Շահի ազգականների և պաշտօնատար անձանց ռոճիկը ու կենսաթոշակը 40%-ով. վերջիններս, ի հարկէ, սաստիկ դժգոհ են սադրազամից։ Սակայն Շահը պաշտպանում է սադրազամին։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

25 Նոյեմբերի

ԿԱԶԱՆ, 25 նոյեմբերի։ Դատարանի շէնքի շուրջը կենդանութիւն է։ Հասարակութիւնը դահլիճ է թողնվում միայն տոմսակով։ Ուժեղ պահակով բերին մեղադրեալներին։ Գլխաւոր ուշադրութիւնը դարձված է Ստօեանի (ինքը և Զայկին) վրա. 28 տարեկան է նա, իրան ազատ է պահում, յաճախ ժպտում է։ Նրա կողքին է ոսկերիչ Մաքսիմովը, յետոյ Կօմովը, մենաստանի պահապան Զախարովը, Պրասկովիա Կուչերովան և Շելլինգը, Կուչերովայի մայրը։ Վկաները 69 հոգի են։ Բոլոր մեղադրեալները պրաւոսլաւնի են։ Կարդացվեց մեղադրական ակտը։ Նախագահի հարցին, թէ ճանաչում են իրանց մեղաւոր, բոլորը բացասաբար պատասխանեցին։ Զայկինը ցոյց տուեց, որ իր բնակարանում գտնված բոլոր թանգագին իրերը գնել է ինքը Մաքսիմովից 750 բուբլու։ Նա դատարանում պատմեց, որ 15 տարի է թողել է հայրական տունը։ Նրա ծնողներն աղքատ մարդիկ են։ Հայրը չէ հաւանել նրա դատարակութեանը։ Նա եղել է Մարիուպոլում, ընկել է գիշերային ապաստանը, զբաղվել է գրպանահատութեամբ։ Յետոյ՝ 1000 բուբլի ունենալով, 4 ամիս առևտուր է արել, իսկ յետոյ տեղափոխվել է Կազան և զբաղվելիս է եղել Մաքսիմովից գողացված իրեր գընելով։ Մաքսիմովը չուլաշ է, Կազանում արհեստանոց է ունեցել։ Կօմովը ցուցում է տուել, որ զբաղվելիս է եղել գրպանահատութեամբ և թղթախաղով։ Ոճիրը բաց անելու ժամանակ ներկայ եղած կոյսերին հարցուփորձի ենթարկեցին։ Նրանց ցուցումները վերաբերում էին միայն մենաստանի պահապան Զախարովին, որն ասում էր, թէ չարագործներն իրան նեռել են ներքնայարկը։ Հաստատված է, որ նա ամսական 3 բուբլի էր ստանում և միակ պահապանն էր։ Պաշտպան Լանսկին և պրոկուրորը ջանում են վերարտադրել, թէ ինչ դրութեան էր Զախարովի զգեստը ներքնայարկից դուրս գալու ժամանակ, որպէս զի պարզվի թէ ինչպէս է Զախարովը ընկել ներքնայարկը։ Պարզվեց, որ Աստուածամօր պատկերի ամենաթանգագին շուրջառը ափսաս է։

ՄՈՒԿԴԷՆ, 25 նոյեմբերի։ (Սեփ. թղթակ.)։ Լուրերին նայելով՝ ցամաքային բանակի մի մասը կոչված է պաշտպանելու Խիրշիմա-Ասակայի ճանապարհը։ Նոյն բանակից էլ ըբացրել են Ֆօրմոզա կղզու վրա եղած անկարգութիւնները ճնշող զօրամասերը։ I և II պահեստի բրիգադները, որ պաշարում են Պօրտ-Արտուրը, շարժել են դէպի Սունլինպու։

ԿՐՕՆՇՏԱԴՏ, 25 նոյեմբերի։ Գլխաւոր հրամանատարի բանակատեղում II կարգի կապիտան Կլազօ զեկուցում արեց խաղաղ-ովկիանական III էսկադրա կազմելու մասին։

26 Նոյեմբերի

ՄՈՒԿԴԷՆ, 25 նոյեմբերի։ (Բերլինի վրայով)։ Բոլոր նշաններից աւելի և աւելի անհաւանական է դառնում, որ եապօնացիները դիտաւորութիւն ունենան ընդհանուր յարձակում սկսել։

ՏՕԿԻՕ, 25 նոյեմբերի։ (Բէյտէր)։ Գլխաւոր շտաբը հաղորդում է, որ եապօնացիների համար շատ գոհացուցիչ հետևանքներ է ունեցել Պօրտ-Արտուրի երէկվայ ռմբակոծութիւն խոշոր թնդանօթներով։

ՏՕԿԻՕ, 25 նոյեմբերի։ (Բերլինի վրայով)։ Եապօնացիները դեռ ևս չեն տիրել Պօրտ-Արտուրի հիւսիսային մարակոցներին։ Այստեղի զինուորական շրջաններում փետրվարի վերջից վաղ չեն սպասում բերդի անկումը։

ԿԻԼ, 25 նոյեմբերի։ (Վոլֆ)։ Ռուսական «Երմակ» սառցահատը կարկատումների վերջացնելուց յետոյ գնաց ծովը։

ՊԱՐԻԶ, 25 նոյեմբերի։ (Բերլինի վրայով)։ «Էխո դը Պարի» խմբագրութեան սկսած հանգանակութիւնը ի նպաստ Պօրտ-Արտուրի պաշտպանների հասաւ 50,000 ֆրանկի։

ՊԱՐԻԶ, 25 նոյեմբերի։ (Հաւաս)։ Գազից խեղդվելուց վախճանվեց պատգամաւոր Սիվէտօն։

ԲԷԼԳՐԱԴ, 25 նոյեմբերի։ (Սեփ. թղթ.)։ Երէկ կաբինէտը կազմակերպվեց և մինիստրների ցուցակը հաւանութիւն գտաւ թագաւորի կողմից։ Վերջին բոպէին հարց յարուցվեց սկուպշչինան արձակելու մասին։ Արմատականները յայտնեցին, որ [illegible] ժեշտ են համարում։ Նրանց կարծիքի հետևիցան անկախները։ Գրուիչը այդ պատճառով հրաժարվեց մինիստրութիւնը կազմելուց։ Թագաւորը այդ յանձնարարութիւնը տուեց Պաշիչին, բայց մինչև այժմ նա դեռ ոչինչ չէ արել։

ՋԻՖՈՒ, 25 նոյեմբերի։ (Բէյտէր)։ Նիւ-Զիւանից եկած լողացող փարոսի կապիտանը հաղորդում է, որ տեսաւ Պօրտ-Արտուրի առաջ չորս եապօնական զրահակիրներ, երեք կրէյսէր և տասը հակա-ականնաւեր, որից նա այն եզրակացութեան եկաւ, որ եապօնական էսկադրան գտնվում է այնտեղ այժմ իր ամբողջ կազմով։

ՎԱՇԻՆԳՏՕՆ, 25 նոյեմբերի։ (Բէյտէր)։ Եապոնիան յայտնեց, որ ընդունում է Միացեալ-Նահանգների հրաւէրը մասնակցելու խաղաղութեան երկրորդ կօնֆէրէնցիային Հաագայում այն դէպքում, եթէ կօնֆէրէնցիայի որոշումները չեն շօշափի ընդհարումը Հեռաւոր Արևելքում։ Պատասխանը հաղորդեց եապօնական գործերի հաւատարմատար Խիօկի պետական քարտուղար Դէին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԴ։ Ներքին գործերի մինիստրը, ի նկատի ունենալով «Сынъ Отечества» լրագրի ՀԱՍԱԿԱՐ ուղղութիւնը, որոշեց յայտնել նրան երկրորդ նախազգուշութիւն։

ՊԵՏԵՐԲՈՒՐԴ։ Գեներալ-լէյտենանտ Սախարովի հեռագիրները գլխաւոր շտաբին. 1) Նոյեմբերի 25-ից. «Նոյեմբերի լոյս 25-ի գիշերը չեն ստացված զեկուցումներ պատերազմական ընդհարումների մասին։—2) Նոյեմբերի 26-ից. «Զեկուցումներ չեն ստացված պատերազմական ընդհարումների մասին նոյեմբերի 25-ին»։

ԿԱԶԱՆ, 26 նոյեմբերի։ Երեկոյեան ժամը 8-ին նիստը վերսկսվեց։ Կարդացվում է Զախարովի բնակարանի իրերի քննութեան արձանագրութիւնը, որը ցոյց է տալիս, որ վերջք չէ եղել։ Կատարվում է երկրորդ խումբ վկաների քննութիւնը։ Արհեստագիտական դպրոցի տեսուչ Վօլմանն ասում է, որ Մաքսիմովի պատուիրած ունելիները դպրոցում, որ հարկաւոր են եղել իբր թէ օղակներ սեղմելու համար, Վօլմանի մէջ կասկած զարթեցրեց, որի պատճառով և նա յայտնեց ոստիկանապետին, թէ այդ ունելիներով կարող են կոտրած լինել։ Ցուցումը հաստատում է նրա օգնական Անդրէեվը։ Երկու վկաներն էլ մեղադրված Մաքսիմովին ցոյց են տալիս իբր պատուէր տուող։ Տեղի է ունենում ունելիների, կողպէքների և մայրերի զննումը. երևում է, որ Մաքսիմովին խուզարկելիս իսկական ունելիներ չեն գտնվել։ Քննութեան են առաջարկվում ոստիկանապետի դպրոցում պատուիրած ունելիները, որ նման են Մաքսիմովի պատուիրածներին՝ համաձայն Վօլմանի մօտ եղած գծագրութեան։ Հաստատվեց, որ ունելիները շինված չեն եղել օղակներ սեղմելու համար։ Վօլմանը ցոյց է տալիս այդ ունելիները և նրանցով սեղմում է տաճարի դռան մայրերից մէկը։ Մաքսիմովը ամբաստան բացատրում է իր ծանօթութիւնը Զայկինի հետ։ Ունելիները նա պատուիրել է նրա յանձնարարութեամբ, թէև սկզբում չէր խոստովանում այդ, վախենալով թէ կը կորցնէ ոսկերչական իրեր պատուիրող մի լաւ յաճախորդ։ Մաքսիմովը մերժում է իր մասնակցութիւնը գողութեան մէջ և ասում է, որ իր նախնական ցուցումները տուել է բրոնութեան տակ, ոստիկանութեան ծեծերի պատճառով։ Նա պնդում է, թէ Զայկինն ասել է, որ իբր թէ ինքը պատկերը ծակոտել է, իսկ Շելլինգն այրել է։ Զայկինը խօսում է յանդգնօրէն և աշխատում է բոլորին պաշտպանել, բացի Մաքսիմովից. նա էլ գիտէր, որ ինքը—Զայկինը ունէր երկու անցագիր։ Մաքսիմովն ինքն է նրան առաջարկել դնել գողացված թանգագին իրեր. նա գնելիս է եղել և ծախելիս։ Ունելիներ չէ պատուիրել։ Իր գընումների մասին ոչ ոքի ոչինչ չէ ասել, մանաւանդ կիներին, վախենալով լուրի տարածվելուց. թագցնում էր նրանց մի ծածուկ արկղում կամ սեղանի ոտների մէջ, այն սեղանի, որ իր հետ քաղաքից քաղաք էր տեղափոխում։ Յետոյ Զայկինը ցուցում տուեց, որ Սամարայում ամենաաւելի հիւրանոցում էր իջել և ցոյց էր տուել վատ կերպով կեղծված կնիքով անցագիր։ Ոստիկանութիւնն ուղեցել է նրան ձերբակալել, բայց նա մի

կերպ ազատվել է ձերբակալութիւնից։ Այն հարցին, թէ Սամարայում նա լուսամուտից դուրս թռել է, Զայկինը պատասխանեց, որ ինքը վայր է իջել ջրատար խողովակով, ոստիկանութեան հետ հաժաձայնութեան գալով, որին տուել է 100 բուբլի և մեկնել է Մարիուպոլ, ուր հանդիպել է Կօնօվին։ Իմանալով, որ նրա գործերը վատ են գնում, նա նրան խորհուրդ է տուել կազան գալ։ Կօնօվը ցուցում տուեց, որ կազան գալով, նա պարապելիս է եղել գրպանահատութիւնով։ Աչքի առաջ ունենալով ոստիկանապետ Պանֆիլովի երկար ցուցումը, ժամը 11½-ին նիստը փակվեց։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ

23 Նոյեմբերի

Բորսայի դիսկօնտը	6—7½% »
Պետական 4% բենտան	91½ — »
I Խաղար. տոմսերը	426½ — »
II » »	319½ — »
III » »	269½ — »
Թիֆլիսի քաղաք. կրեդիտ. Ընկ.	— — — »
Բագուի » » »	— — — »
Թիֆլիսի հող. բանկի 5%	— — — »
» » » 4½%	— — — »
Բագուի նաւթ. Ընկ.	436— — »
Կասպիական Ընկ.	5700(?) — »
Մանթաշեան և Ընկ.	246— — »
Նոբէլի և Ընկ.	10750— — »

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. Ա. Ստեփանեան
Ընդունում է առաւօտեան 9—2 և 5-7, Վեւիամինսկայա փ. № 8.
ա. օ. 12—100

ԿԻՆ ԲԺԻՇԿ Ս. Զ. ՄԻՐԶՈՅԵԱՆ
ԱԶՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր, ժ. 2—3 և 5—7 երեկոյեան, իսկ տօն օրերին առաւօտեան ժամը 10—11. Սօլոլակի փող. № 6.
(ա. օ.) 7—50

I
Յովհ. Աբրահամեանի
ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ
ա., բ. և գ. տարի
Դիմել հետեւեալ հասցէով՝ Александрополь, M-lle Сирануйшѣ Арабаджіанцъ.
II
Յովհաննէս Առաքելեանի նոր հասցէն՝ Ростовъ н/д., Уголъ Пушкинской ул. и Большого проспекта д. № 152 Оболешевой.
Հ. 2. 7—10

Լոյս տեսաւ
«ԿԱՐԳ. ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ»
Դասագիրքը, հինգերորդ տպագրութեամբ աշխ. Գիւտ ա. ք. Աղանեանի
Գինն է 50 կոպէկ։
Պահեստը գտնվում է Կենտրոնական գրավաճառանոցում։ 2. 9—10

Լոյս տեսաւ
Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆԻ
ԼՈՒՈՒԹԻՒՆԸ
(Վէպ)
Գինն է 60 կոպ.
Շուտով լոյս կը տեսնի «Պատկերներ» Բ. հրատ.
Դիմել՝ Թիֆլիսի հայ գրավաճառներին և հեղինակին՝ Редакція „Мурчъ“, Тифлисъ.

ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ
գրավաճառանոցում վաճառվում են Ղ. Աղայեանի հետեւեալ աշխատութիւնները.

Պատկերազարդ բբենարան, բ. տպ. ճոխ.	— 15
Մայրենի լեզու, 9-րդ տպագր. բ. տարի	— 30
Մայրենի լեզու, 4-րդ տպագր. գ. տարի	— 65
Արուեստ և Մանուկ, 3 հատոր	— 60
Բանաստեղծութիւններ	1 —
Ժամանակակից մատենախօսութիւն	— 20
Տարրական ֆիզիկա ըստ Կրիւգերի, ... գային դպրոցների համար 84 առանձին տպված նկարներով	— 30

Դիմել՝ Тифлисъ. Книжный магазинъ «Гуттенбергъ», Г. И. Галустяну. Նոյն տեղը վաճառվում են օրացոյցներ—Թոփչեանի, Զմշկեանի, Кавказскій, Всеобщій, Крестый և այլն։ Գուժարով գնողներին զեղչով։ 3—3

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՕՆ
Ձեռնարկութիւն Կայսերական թատրոնների արտիստ Լ. Դ. Դօնսկոյի
Այսօր, շաբաթ, նոյեմբերի 27-ին 7-րդ գալա ներկայացում, մասնակցութեամբ տ.տ. Դօնսկոյ-Էյխենվալդի, Միխայլովի, Շիխուցկոյ-Մինսենկօի, Խարիտոնովայի, պ.պ. Սակիչինսկու, Պոլուեանովի, Գալեցկու, Պօլուբինովսկու, Սպերանսկու, Բագրովի, Զալինսկու և Մուրատովի կը ներկայացվի
ԲՕՐԻՍ ԳՕԴՈՒՆՕՎ
օպեր. 4 գործ., երաժ. Մուսօգօրսկի։
Սկիզբը երեկոյեան ժամը 8-ին։
Վաղը, կիրակի, նոյեմբերի 28 ին, մասնակցութեամբ Դօնսկոյի կը ներկայացվի I ՖԵՆԵԼԼԱ, օպեր. 4 գործ. երաժ. Օբերի։ II ԱԼԷՔՕ, օպերա 1 գործ., երաժ. Բօխմանիկովա։ Երկուշաբթի, նոյեմբ. 29-ին, Թիֆլիսի ըէալական դպրոցի չքաւոր աշակերտների օգտին կը ներկայացվի ԱԻԴԱ, օպեր. 5 գործ. երաժ. Վերդիի։
Հինգշաբթի, դեկտեմբերի 2-ին կը կայանայ բենեֆիս Ն. Ի. Սպերանսկու։
Պատրաստվում են ներկայացնելու ՄԱՆԴԱՐԻՆԻ ՈՐԴԻ, օպեր. 1 գործ. երաժ. Կիւի. ՄԱՆՕՆ, օպեր. 5 գործ. երաժ. Մասսընիէ։
1—1 Կառավարիչ՝ Ի. Ա. Կէլէր

ՀԱՒԼԱԲԱՐՈՒՄ — ԱՐԱԲՍԵԱՆԻ ԹԱՏՐՕՆՈՒՄ
Շաբաթ, նոյեմբերի 27-ին
Հայ և վրաց թատերասէրների ընկերութիւնը կը ներկայացնէ
I վրացերէն
ԿԻՆՏՕ
կօմ. 2 գործ. հեղ. Ա. Ցերեթելու։
Կինցօ-ի դերը կը կատարի օր. Բեգիջանեանը։ Կինցօ-Գեվօյի դերը կը կատարէ տ. Փիրումեանը։
II հայերէն
ԴԱԼԱԼ-ՂԱՂՕ
վօդեվիլ 1 գործ. հեղ. Փուղինեանի
Մասնակցում են.—տ. Փիրումեան, օր. Բէգիջանեան, պ.պ. Գելիկուրաշվիլի, Լաշքարեան, Մարկոսեան, Մովսեսեան, Նազարբէգեան, Զալարեան, Զաքարուբի, Սալաղայա, Վարդանեան, Փիրումեան և ուրիշները։
Սկիզբն է 8½ ժամին երեկոյեան։
Տեղերի գինը 1 բուբլուց մինչև 20 կ.
Խաղամիջոցներին կը նուագէ երաժշտական խումբը։ 1—1

ԲԺՇԿԱՊԵՏ Մ. ՄՈՒՐԱԴԵԱՆ
նախկին ординаторъ Մոսկվայի համալսարանի կլինիկայի
Ընդունում է յատկապէս միզանցքասեռական, սիֆիլիսի և կաշու հիւանդութիւններ ունեցողներին։ Ընդունելութիւնն ամեն օր՝ 10—11 ժամին առաւօտեան և 6—8 ժամին երեկոյեան։ Բարշչեվսկի № 1, «Պօժարնի կօմանդի» դիմացը. տելէֆօն № 11. 5—10

ԿՐՕՆԻ ԴԱՍԱԳՐԵՐ
Աշակերտաց համար

	Ր.	կ.	
1. Դասատետր կրօնի I տարի	—	25	25% զ.
2. » » II »	—	20	
3. » » III »	—	30	20% զեղչ
4. Հին-ուխտ (ընդարձակ)	—	45	
5. » (համառօտ)	—	35	
6. Նոր-ուխտ	—	40	
7. Գործք առաքելոց	—	40	
Ուսուցչաց համար			
8. Ուղեցոյց (մեթոդիկայ) հին-ուխտի	1	75	35% զեղչ
9. Ուղեցոյց (մեթոդիկայ) նոր-ուխտի	2	5	
10. Ուսուցումն քրիստոնէական կրօնի Դ.	1	50	
11. Ուսուցումն քրիստոնէական կրօնի Ե.	—	50	

Ցանկացողները կարող են դիմել հետեւեալ հասցէով.
1) Тифлисъ, священнику С. Саакянцъ, Коммерческое училище.
2) » Книжный магазинъ «Гуттенбергъ»
3) » » «Центральный».
—
Դասագրքերիս պահեստը գտնվում է պ. Ալէքսանդր Ամիրաղանցի մօտ (Карвансарай Тамамшева, мануфактурный магазинъ А. Амирагова).
Ցանկացողները նրանից ևս կարող են պահանջ անել։
Սահակ քահ. Սահակիանց
յ.ա. օ. յլ.—օ. օր-մէջ ս. ա. օ. 60—66

Լոյս տեսաւ
ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՅԻ
ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ
Հատոր առաջին. 1865—1871.
ԳԻՆՆ Է 1 ՐՈՒԲԼԻ.
Առաջին հատորի մէջ զետեղված են այն խաղը ու մանր յօդուածները, որոնք լոյս են տեսել մինչև «Մշակ» լրագրի հրատարակութիւնը։ Այդ յօդուածները վերաբերում են 1865—1871 թուականների շրջանին և տպված են եղել մասամբ «Մեղու Հայաստանի» լրագրում, իսկ մասամբ «Հայկական Աշխարհ» ամսագրում։
Դիմել «Գուտտենբերգ» գրախանութը։ 23—25

Լոյս տեսաւ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆԻ
ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ՄԵՍՐՈՊԵԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ
№ 5, 7, 8 գրքերը
№ 5—ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, Լէօի
I հատոր, երկրորդ տպագրութիւն, փոփոխած, լրացրած և էժանացրած
(Առաջին տպագրութիւնը 453 էջ էր և արժէր 1 ր. 50 կ., ներկայ հրատարակութիւնը 548 էջ է, աւելի մեծ ծաւալով և արժէ 1 ր. 20 կ.)։
Ճանապարհածախսով 1 ր. 40 կ.
Տասը հատ միանգամից գնողը ստանում է 10% զիջումն և ճանապարհածախս չէ վճարում։
№ 7—«ԴԷՊԻ ԱՐԱՐԱՏ», Արշ. Մխիթարեանի, գինն է 40 կ.։
№ 8—«ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՆԵՑՈՒԿՆԵՐԸ», գրաֆ Իբսէնի, գինն է 50 կ.։
Այս երեք գրքերը միասին գնողը ճանապարհածախս չէ վճարում։
—
Դիմել Հանրամատչելի Գրադարանի խմբագիր-հրատարակիչ Հ. Առաքելեանին, Թիֆլիս, «Մշակի» խմբագրութիւն։

Երդուեալ հաւատարմատար
Ս. Ս. ՄԷԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆՑԻ
„Практическое Руководство“
для составленія бумагъ по дѣламъ Гражданскаго Судопроизводства въ ЗАКАВКАЗСКОМЪ КРАѢ, изд. 1904 года“.
Գինն է 1 բուբլի։
Վաճառվում է Թիֆլիսում. Կենտրոնական, Խրդդէկլի և Գուտտէնբէրգ գրավաճառանոցներում։ Հեղինակին դիմողներ՝ (Прис. повѣр. С. С. Меликъ-Адамову, Тифлисъ. Межевая ул., д. № 40) 10 օրինակից աւելի պահանջողները՝ ստանում են 20% զեղչ և ճանապարհածախս չեն վճարում։ ե. շ. 4—30

Ս. Յ. ՄԱՏԻՆԵԱՆՑԻ
գրականական պիտոյից մագազինը (Միքայէլ. մաժուրջ) միշտ պահում է մեծ ընտրութիւն
100,000 ԲԱՑ ՆԱՄԱԿՆԵՐԻ 100,000
Նորութիւններ ստացվում են անընդհատ։
Գինը 2, 3, 5, 8, 10 15 և 20 կոպէկ։
Վաճառականներին մեծ զիջում. գաւառներից ստացված պատուէրները կատարվում են իսկոյն։ (շ. չ.) 1—6

Թիֆլիսի Ազնուականների պատգամաւորական ժողովը, ձեռնարկել է ազնուականների տոհմագրական գրքերի կազմութեանը և սկսել է կազմել հետեւեալ ընտանիքների տոհմագրութիւնը. Աբաշիձե, Աբխամի, Ամամելիքօվներ, Ավալօվներ, Ամասուլօվներ, Աբելիախօրի, Ամիրաջիբի, Բագրատիօն-Մուխրանսկիներ, Բագրատիօն-Դաւիդօվներ, Բարատօվներ, Բեբութօվներ, Բեկբաբեկօվներ, Վախվախօվներ, Վաչինձե, Վեգիրօվներ, Գուլգինսկիներ, Դաւրամօվներ, Ջանդիերի, Ջորջաձե, Լիսինձե, Մագալօվներ, Մելիքօվներ եւ Մայսարեանի, խնդրում է վերոյիշեալ ընտանիքներին պատկանող անձերին, որոնք ցանկանում են արագել տոհմագրութեան մէջ մտած տեղեկութիւնների լիակատարութիւնը և կանոնաւորութիւնը, դիմել Պատգամաւորների ժողովին (Սօլոլակի փողոց № 10), շաբաթ օրերը, ցերեկվայ ժամը 11—12-ին։ 3—5

Բ Ժ Ի Շ Կ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, մորթու և վեներական ախտ ունեցող հիւանդներ ամենայն օր 12—2 առաւօտ. և 6—8 երեկ.
Մեծ Վանքի փողոց, տուն Կուզանօվի—դեղատան կից։ (ե. հ. շ.) 7—10

Cascara Midy
ՊԻԼԻԻԼՆԵՐ
Ֆրանսիական ժողովրդական միջոց
ՍՈՎՈՐԱԿԱՆ ԱՄՐՈՒԹԵԱՆ ԴԷՄ
Չափը—2 պիլիւլ երեկոյեան պառկելիս։
Cascar Midy ն (Կասկար-Միդին) չէ առաջացնում ոչ փորացաւ, ոչ սիրտխառնոց, ոչ էլ լուծողութիւն։
Դեղատուն—Midy, 113, faubourg St. Honoré, Պարիզ։ Ռուսաստանի գլխաւոր դեղատներում։
№ 186213 ն. 27, 30, դ. 10, 20, 30 1—5



Պրոֆիզոր Ա. ՍԱՐՈՒԽԱՆԵԱՆՑԻ
ԲՕՐՕ-ՆԱՖԹԱԼԱՆ
Նոր նիւթը
Կատարելապէս ոչնչացնում է գլխի թեփը, ամրացնում է մազերը և օգնում մազերի բսնելուն. տալիս է մազերին իրանց բնական ու հաստատ տեսքը։ Թոյլատրված է բժշկական վարչութիւնից, իբրև ոչ մի վնասակար նիւթ չը պարունակող։
Պահեստարան Кавказское Товар. торговл. аптек. товарами Въ Тифлисѣ, Баку, Батумѣ, վաճառվում է և Ռուսաստանի դեղատներում և դեղավաճառատներում։
Արժէքն է 1 բուբլի 25 կոպէկ։
(շ. 1 ան.) 23—50

ՇՐՋԱԹԱՅ
Նաւթարդիւնաբերական ընկերութեան վարչութիւնը յայտարարում է ի գիտութիւն պ.պ. բաժնետէրերի, որ նա նշանակել է 77-դ վճար, այսինքն 7 ր. իւրաքանչիւր փայի համար 1 ից մինչև դեկտեմբերի 7-ը ներփակաբար և 8-ից մինչև 17 ը ներփակաբար պէնիներով, որից յետոյ, փայերը, որոնց համար վճարներ չեն մտցնվի. ընկերութեան դաշնագրի 7 § համաձայն, անվաւեր են համարվում։
Վճարները կընդունվեն Ընկերութեան գրասենեակում, որ գտնվում է Լերմօնտովսկայա և Վելիամինովսկայա փողոցների անկիւնում Խանկալաժովայի տան մէջ (մուտքը Լերմօնտովսկայա փողոցից) առաւօտեան 9 ժամից մինչև ցերեկվայ 2 ժամը և 6 ժամից մինչև երեկոյեան 9 ժամը։
Վճարը մտցնելու ժամանակ փայատէրերը պարտաւոր են ներկայացնել փայերի անդորագրեր։ (20, 27, 30) 2—3

Դ. ՊԷՏԷՐ, հնարողը
ՎԻՎԷ—ՇՎԵՅՑԱՐԻԱ։
Աշխարհում առաջին կաթէ շոկոլադ։ Բոլոր ուրիշ մարկաները պատճէն են, ոչ իսկական։
(2. 2—10

Նեկրոլոգներ կարդալու համար Թիֆլիսի դպրոցական խորհրդի № 2.

Дозволено цензурою. Тифлисъ. 26-го ноября 1904 г. Գնարան «ՀԵՐՄԷՍ» ԸՆԿ. Типогр. Т—ва С. Назарянца и К. п. ф. «ГЕРМЕСЪ». Мад. ул. № 15.